ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր Կորյուն Աթոյանի ելույթը Տեմպուսի «Արարատ» ծրագրի ամփոփիչ համաժողովում

Հարգելի հյուրեր, գործընկերներ, ներկաներ

Ողջունում եմ ձեզ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ «Համալսարան-Գործատու Հայկական համակարգող գործակալություն» «Տեմպուսի» «Արարատ» ծրագրի ամփոփիչ համաժողովին:

Տնտեսագիտական համալսարանի գործունեության կարևոր ուղղություններից է միջազգայնացումը և այս առումով մեր համալսարանը վերջին տարիներին բավական ձեռքբերումներ է արձանագրել: Այս ասպարեզում առաջին լուրջ հաջողությունը մեր համալսարանն արձանագրեց 2012թ., երբ բուհը շահեց «Տեմպուսի» 3 ծրագիր, որոնց թիվը, իհարկե, հետագայում շատացավ: Առաջին անգամ հայաստանյան համալսարաններից Տնտեսագիտական համալսարանը դարձավ Եվրոպական միության ծրագրի համակարգող, ինչը և՛ պատվաբեր էր, և՛ չափազանց պատասխանատու:

Այսօր, երբ մենք ամփոփում ենք մեր ավելի քան 3 տարիների աշխատանքը, ես ցանկանում եմ շնորհակալություն հայտնել Եվրոպայի և Հայաստանի գործընկերներին, «Էրասմուս պլյուս» ծրագրի հայաստանյան գրասենյակի և Եվրոպական հանձնաժողովի պատասխանատուներին՝ «Արարատ» ծրագրի գործողություններին մասնակցելու և համատեղ ջանքերով այն ավարտին հասցնելու համար:

Ծրագիրն իրականացնելու ընթացքում հայաստանյան մասնակիցները՝ բուհերը, պետական մարմիններն ու կազմակերպությունները ձևավորել են գործընկերային ամուր ցանց և խորացրել են համագործակցությունը՝ ի նպաստ բարձրագույն կրթության համակարգի բարենորոգմանը:

«Արարատ» ծրագիրը խիստ համահունչ է աշխարհում և Եվրոպայում ընթացող կրթական բարեփոխումներին և զարգացումներին: Բոլոնիայի գործընթացի մեկնարկից անցել է արդեն տասնվեց տարի, սակայն կրթական բարեփոխումները դեռ չեն մտել ավարտական փուլ: Ներկա զարգացումներն արդեն պայմանավորված են կրթության քաղաքականությունից դրանց իրագործմանն անցումով: Իսկ այս պատասխանատվությունը կրում են համալսարանները, որոնց գործունեությունից է կախված կրթական բարեփոխումների իրականացումը և, ընդհանուր առմամբ, հասարակական զարգացումը:

Բարձրագույն կրթության համակարգի առջև ծառացած ներկա մարտահրավերներից կարևորագույնը շրջանավարտների ծառայողունակության բարձրացումն է: Համալսարանները աստիճանաբար պետք է հաղթահարեն մեկուսացված, խիստ ակադեմիական կարգավիճակը և դառնան ոչ միայն բաց համակարգեր, այլև կամրջեն կրթությունը և աշխատաշուկան: Այս գործընթացներում պետք է ընդգրկվեն կրթության բոլոր շահակիցները՝ ուսանողները, գործատուները, շրջանավարտները, ծնողները, պետական և հասարակական կազմակերպությունները, այլ խոսքով՝ ամբողջ հասարակությունը:

Կրթության և աշխատաշուկայի միջև կապի ապահովման կարևորագույն խնդրին էր միտված «Արարատ» ծրագիրը, որի գերնպատակն է՝ ապահովել կրթության և աշխատաշուկայի կապը՝ մեկտեղելով կրթության բոլոր շահակիցներին և իրականացնել կրթական գործընթացի բարեփոխումներ՝ ելնելով աշխատաշուկայի պահանջներից։

Նշենք «Արարատ» ծրագրի հիմնական ձեռքբերումները.

- Բուհերում ստեղծվել են Կրթություն-Աշխատաշուկա համագործակցության միավորներ, որոնք միավորվել են համագործակցության ցանցում։ Մշակվել են ցանցի գործունեության կանոնակարգը և էլեկտրոնային հարթակը։
- Մշակվել է Կրթություն-Աշխատաշուկա կապի համագործակցության շրջանակում ուսանողների մասնակցության բնութագիրը։
- Հզորացվել են գործընկերների կարողությունները, ինչպես սարքավորումներով, այնպես էլ վերապատրաստման դասընթացներով և ուսումնական նյութերով՝ ապահովելու և արդյունավետ իրագործելու կրթության և աշխատաշուկայի կապը,
- Գործատուների և այլ շահակիցների հետ քննարկվել և մշակվել են ոլորտային որակավորումների բնութագրեր՝ երեք ոլորտների համար.
    - Տեղեկատվական տեխնոլոգիաներ/ Ճարտարագիտություն
    - Մանկավարժություն/ Կրթություն
    - Տնտեսագիտություն/ Կառավարում
- Պատրաստվել է Ոլորտային որակավորումների մշակման մեթոդաբանություն և կիրառման ընթացակարգ։

Ծրագրի ավարտը նաև ապագա գործողությունների սկիզբն է, քանի որ կրթության որակի բարձրացումը հարատև գործընթաց է։ Կարծում եմ, «Արարատ» ծրագրի արդյունքում ձեռք բերված գիտելիքները, հմտությունները և փորձը կօգնեն Հայաստանի բուհերին բարեփոխումների իրականացման և միջազգային ճանաչման գործում։

Ամփոփելով խոսքս՝ ցանկանում եմ հաջողություն մաղթել բոլորիս ինչպես կրթական բարեփոխումների, այնպես էլ ծրագրի արդյունքների հետագա իրականացման գործում։

Շնորհակալություն ուշադրության համար։